ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 16.01.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/53

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 28.12.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/53 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Ֆոտոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 28.12.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(15/2)-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Գալիմա» ՍՊԸ-ն և Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանը:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: «Գալիմա» ՍՊԸ-ի և Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանի կողմից

ներկայացված հայտի ապահովման գումարները գերազանցում են հրավերով պահանջվող գնային առաջարկի 5 տոկոսը:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշվել է հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն (այսուհետ նաև՝ Կարգ)՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր «Գալիմա» ՍՊԸ-ի և Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանի հայտերը, քանի որ երկուսի դեպքում էլ ներկայացված հայտի ապահովումները կազմված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին.

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Ընկերությունը ներկայացված բողոքով Խորհրդին խնդրել է չեղյալ համարել «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՆՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(15/2)-18/1» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի 19.12.2017թ. հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությունը և 27.12.2017թ. պայմանագրի կնքման մասին որոշումը, ինչպես նաև մերժել «Գալիմա» ՍՊԸ-ի և Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյանի հայտերը:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 09.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 28.12.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ը 08.01.2018թ. Խորհրդին է ներկայացրել «ՆՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(15/2)-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը:

Պատվիրատուն, վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումը՝ «Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին» վերաբերում է պատվիրատուներին: Մասնակիցների կողմից ներկայացվող հայտի ապահովման չափը 5 տոկոսը գերազանցելը չի սահմանափակում և չի ոտնահարում մյուս մասնակիցների իրավունքները և շահերը:

«Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 09.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 08.01.2018թ. գրությամբ Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/53 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/53 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(15/2)-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտեր են ներկայացրել նաև «Գալիմա» ՍՊԸ-ն և Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյան Հովհաննեսը:

2. «Գալիմա» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 12 391 985 ՀՀ դրամ:

3. «Գալիմա» ՍՊԸ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը, որտեղ հայտի ապահովման գումարի չափը նշել է 700 000 ՀՀ դրամ:

4. Արտաշես Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 2 961 501 ՀՀ դրամ:

5. Արտաշես Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը, որտեղ հայտի ապահովման գումարի չափը նշել է 150 000 ՀՀ դրամ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.12.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Արտաշես Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ն թիվ 43, 47, 48 և 52-րդ իսկ «Գալիմա» ՍՊԸ-ն՝ թիվ 8, 9, 17, 18, 25, 26, 41 և 51-րդ չափաբաժինների մասով ճանաչվել են առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ:

7. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է ծանուցել և առաջարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին 3 աշխատանքային օրվա ընթացքում «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող «ՆՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(15/2)-18/1» ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Արտաշես Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ն թիվ 43, 47, 48 և 52-րդ իսկ «Գալիմա» ՍՊԸ-ն՝ թիվ 8, 9, 17, 18, 25, 26, 41 և 51-րդ չափաբաժինների մասով ճանաչվել են ընտրված մասնակիցներ

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 28.12.2017թ. ներկայացված բողոքը և «Նուբարաշենի մարզառազմական

մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի 08.01.2018թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:*** Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:*** Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով

կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(15/2)-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:*** Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

«Գալիմա» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***12 391 985 ՀՀ դրամ***:

Միևնույն ժամանակ «Գալիմա» ՍՊԸ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը, որտեղ հայտի ապահովման գումարի չափը նշել է ***700 000 ՀՀ դրամ***:

Արտաշես Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***2 961 501 ՀՀ դրամ:***

Միևնույն ժամանակ Արտաշես Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը, որտեղ հայտի ապահովման գումարի չափը նշել է ***150 000 ՀՀ դրամ:***

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:***

Այսպիսով, վերոգրյալ իրավական հիմնավորումներից ելնելով, Խորհուրդն արձանագրում է, որ «Գալիմա» ՍՊԸ-ի և Արտաշես Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը գերազանցում է վերջիններիս կողմից ներկայացված գնային առաջարկների հինգ տոկոսը, քանի որ «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է ***619 599.25 ՀՀ դրամ***, այլ ոչ ***700 000 ՀՀ դրամ***, իսկ Արտաշես Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է ***148 075.05 ՀՀ դրամ***, այլ ոչ ***150 000 ՀՀ դրամ***, ուստի նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ «Գալիմա» ՍՊԸ-ի և Արտաշես Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ի կողմից «ՆՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(15/2)-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ չի բավարարում գնային առաջարկի հինգ տոկոսի չափով ներկայացված լինելու պահանջին:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ «Գալիմա» ՍՊԸ-ի և Արտաշես Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ի հայտերը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ ենթակա էր մերժման հայտերի բացման նիստում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 28.12.2017թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

1. «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՆՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(15/2)-18/1» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի 19.12.2017թ. հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությունը չեղյալ համարելու մասին պահանջը մերժել:

2. 27.12.2017թ. պայմանագրի կնքման մասին որոշումը չեղյալ համարելու մասին պահանջը մերժել:

3. Պարտավորեցնել «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար հայտարարված թիվ «ՆՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(15/2)-18/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին մերժել «Գալիմա» ՍՊԸ-ի և Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյան Հովհաննեսի հայտերը, ինչպես նաև դադարեցնել վերջիններիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ